ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության և Ուկրաինայի մշակույթի և արվեստի նախարարության միջև մշակույթի բնագավառում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարությունը և Ուկրաինայի մշակույթի և արվեստի նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ձգտելով խորացնել և կատարելագործել համագործակցությունը մշակույթի և արվեստի բնագավառում, ինչը կնպաստի փոխադարձաբար հարստացմանը, ստեղծագործական ներուժի բարձրացմանը, Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի մշակույթի հետագա զարգացմանը,

երկու երկրների միջև բարեկամական հարաբերությունների և հետագա փոխշահավետ համագործակցության ամրապնդման նպատակով,

ելնելով 1996 թվականի մայիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ուկրաինայի կառավարության միջև մշակութային համագործակցության մասին» Համաձայնագրի դրույթների սկզբունքներից,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը, սույն Համաձայնագրին և իրենց ազգային օրենսդրությանը համապատասխան, համագործակցություն կիրականացնեն երկու երկրների մշակույթի և արվեստի հիմնարկների միջև՝ Հայաստանի և Ուկրաինայի ժողովուրդների միջև մշակութային կապերի ամրապնդման և զարգացման նպատակով:

Այդ նպատակով նրանք կնպաստեն՝

Հայաստանում և Ուկրաինայում տոների, մրցույթների, մշակույթի փառատոների, մշակութահասարակական համալիր միջոցառումների կազմակերպմանը և անցկացմանը,

մասնագիտական և ինքնագործ գեղարվեստական ստեղծագործական կոլեկտիվների և մենակատարների փոխանակմանը,

գեղարվեստական ցուցահանդեսների փոխանակմանը,

գիտաժողովներին, կոնֆերանսներին, սեմինարներին, այլ մշակութային միջոցառումներին մշակույթի և արվեստի ներկայացուցիչների փոխադարձաբար մասնակցությանը,

մշակութային հուշարձանների և գեղարվեստական արժեքների պահպանման, հետազոտման, վերականգնման և օգտագործման բնագավառում փորձի փոխանակմանը,

Կողմերի միջև մշակութային հարաբերությունները խորացնող համագործակցության այլ ձևերին:

Հոդված 2

Կողմերը կաջակցեն Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի մշակույթի և արվեստի հիմնարկների՝ թատրոնների, թանգարանների, պատկերասրահների, գրադարանների, մշակութային հուշարձանների և գեղարվեստական արժեքների պահպանության և վերականգնման հաստատությունների, համերգային կազմակերպությունների և ժողովրդական ստեղծագործության հաստատությունների միջև անմիջական համագործակցությանը: Այդ համագործակցությունը կիրականացվի գործընկերների միջև առանձին և անմիջական պայմանագրերի հիման վրա:

Հոդված 3

Ելնելով միջազգային իրավունքի նորմերից և Հայաստանի Հանրապետության ու Ուկրաինայի գործող օրենսդրությունից՝ Կողմերը պատրաստ են ձեռնարկել համատեղ միջոցներ, որոնք կկանխեն մշակութային արժեքների ապօրինի ներմուծումն ու արտահանումը, փոխադարձաբար սույն հարցերով կտեղեկացնեն միմյանց ու կկատարեն փորձի փոխանակում սույն հարցերով:

Հոդված 4

Սույն Համաձայնագրի գործնական իրականացման նպատակով Կողմերը կարող են ստորագրել և իրականացնել մշակույթի բնագավառում համագործակցության կոնկրետ ծրագրեր, որոնք պետք է ստորագրվեն Կողմերի լիազորված ներկայացուցիչների կողմից: Փոխադարձ գրավոր պայմանավորվածության հիման վրա այսպիսի ծրագրերը կարող են լրացվել, կոնկրետացվել կամ փոփոխվել:

Հոդված 5

Կողմերը, ղեկավարվելով իրենց երկրների գործող օրենսդրությամբ, կաջակցեն իրենց տարածքներում բնակվող ազգային փոքրամասնությունների մշակույթի, լեզվի պահպանման, կրոնական և հոգևոր կարիքների համար:

Հոդված 6

Կողմերը կապահովեն ազգային փաքրամասնությունների պատմամշակութային ժառանգության հետ կապված մշակութային արժեքների, հուշարձանների և մշակութային օբյեկտների իրավաբանական, նյութական և այլ պաշտպանությունը, կաջակցեն դրանց պահպանմանը, վերականգնմանը և հաշվառմանը:

Հոդված 7

Կողմերը կաջակցեն գեղարվեստական կրթության բնագավառում բազմակողմ համագործակցությանը, ուսուցիչների, ուսանողների և աշակերտների փոխանակմանը:

Հոդված 8

Կողմերը պայմանավորվեցին, որ մշակութային համագործակցության իրականացման ընթացքում ֆինանսական պայմանները կկարգավորվեն ու կհաստատվեն համագործակցության ծրագրին համապատասխան:

Գեղարվեստական կոլեկտիվների և ցուցահանդեսների փոխանակումը կարող է իրականացվել ինչպես անվճար, այնպես էլ առևտրային հիմքերով:

Հոդված 9

Կողմերը բազմակողմանիորեն կզարգացնեն համագործակցությունը կինեմատոգրաֆիայի ոլորտում՝ աջակցելով.

- կինոնկարների համատեղ արտադրության կազմակերպմանը,
- երկու երկրների ազգային կինոարվեստի տարածմանը՝ առևտրային կամ ոչ առևտրային հիմունքներով ֆիլմերի փոխանակմամբ,
- կինոարվեստի գործիչների հանդիպումների կազմակերպմանը,

- երկու երկրներում առաջնախաղ ցուցադրումների և կինոշաբաթների կազմակերպմանը:

Հոդված 10

Կողմերի համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ: Փոփոխությունները և լրացումները ձևակերպվում են առանձին արձանագրություններով, որոնք հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը և ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 11-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Հոդված 11

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի՝ դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին դիվանագիտական ճանապարհով միմյանց ծանուցելու օրվանից:

Սույն Համաձայնագիրը կնքվում է հինգ տարի ժամկետով և դրա գործողությունը ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ հինգ տարիների համար, եթե Կողմերից որևէ մեկը տվյալ ժամկետը լրանալուց առնվազն վեց ամիս առաջ դիվանագիտական ճանապարհով մյուս Կողմին չհայտնի Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Սույն Համաձայնագրի գործողության դադարեցումից հետո Կողմերի մշակույթի և արվեստի հիմնարկների միջև կնքված պայմանագրերը մնում են ուժի մեջ մինչև այդ պայմանագրերով ստանձնած պարտավորությունների լրիվ կատարումը:

Կատարված է Կիև քաղաքում 1999 թվականի դեկտեմբերի 7-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ուկրաիներեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման տարաձայնությունների դեպքում առաջնությունը տրվում է ռուսերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2000 թվականի օգոստոսի 28-ից: